

5686



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«20» 05 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 062 - 24

Նախաձեռնողը՝

«Կամենկա Սթոուն» ՍՊԸ

Լոռու մարզ, Տաշիր համայնք, Վան թղմ., 3-րդ փողոց

Գործունեությունը՝

Տաշիր համայնքի Սարապովկայի բազալի (հարավ-արևելյան տեղամաս) արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկարգություն

Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 062 - 24

«20» Տպիսիս 2024 թ.

**Լոռու մարզի Սարատովկայի բազալտի հանքավայրի (հարավ-արևելյան տեղամաս) արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «Կամենկա սթոուն» ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթղթեր  
Տեղադրման վայրը՝ Լոռու մարզ, Տաշիր համայնք, բն. Տաշիր

**Ներածական մաս.** Լոռու մարզի Սարատովկայի բազալտի հանքավայրում «Կամենկա սթոուն» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Սարատովկայի բազալտի հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Տաշիր խոշորացված համայնքի Տաշիր բնակավայրի վարչական սահմաններում: Հայցվող տարածքից 120 մ արևելք անցնում է Մ-3 միջպետական նշանակության ավտոճանապարհը, Տաշիր քաղաքի բնակելի շինությունները գտնվում են 690 մ, Սարատովկա գյուղի շինությունները՝ 520 մ, Լոռվա ջրանցքը՝ 830 մ հեռավորությունների վրա: Հայցվող տարածքը գտնվում է Տաշիր գետի հունից 175-370 մ հեռավորության վրա և առանձնացված է բուն հունային հատվածից բազալտի ժայռային մերկացումներով:

Լեռնագրական տեսակետից հայցվող տարածքը Լոռվա բարձրադիր լեռնային սարահարթի կազմում է, որը հարավից սահմանափակված է Բազումի, արևմուտքից՝ Ջավախքի և Վիրահայոց, իսկ արևելյան կողմից՝ Լեջանի լեռնաշղթաներով: Հայցվող տարածքի բացարձակ բարձրությունները տատանվում են 1600-1930 մ սահմաններում: Հայցվող տարածքի շրջանում հիմնական մակերևութային ջրային միավորը Տաշիր գետն է: Սարատովկայի հանքավայրի շրջանը հարուստ է խորքային՝ արտեզյան ջրերով և աղբյուրներով: Արտեզյան ավազանում 2 ճնշումային ջրային հորիզոնները հայտնաբերված են 70-90 մետր խորությունների վրա: Գրունտային ջրերը բացակայում են հանքավայրի տարածքում՝ պայմանավորված տարածքը կազմող բազալտային հոսքերի բարձր ծակոտկենությամբ և ճեղքավորվածությամբ: Քարտեզագրված սողանքային մարմինները տեղամասից գտնվում են 7.38-8.4 կմ հեռավորության վրա: Բուն տեղամասում սողանքներ չեն գրանցվել:



Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հրաբխային էոցենի, պլիոցենի և չորրորդական հասակի ապարներ: Կառուցվածքը բաղկացած է (ներքևից վերև) միջին էոցենի հասակի տուֆոզեն զանգվածից, պլիոցեն հասակի բազալտներից, ժամանակակից նստվածքներից: Բազալտներն ունեն հոսքային ձև և մեղմ թեքությամբ (0-5° դեպի հարավ) փռված են կավերի վրա, որոնք գտնվում են նախավերջին և վերջին հոսքերի արանքում՝ 2.5-6.0 մ հզորությամբ: Հետազոտված տարածքում արդյունաբերական բազալտների հզորությունը միջինը 7.08 մ (3.5-ից մինչև 9.8 մ) է, իսկ բազալտների հզորությունը հասնում է 11-12 մ-ի:

Հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 41° 5'22.07" հյուսիսային լայնության, 44°18'25.91" արևելյան երկայնության:

Լոռու մարզի Սարատավայրի բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր ՊՊՀ-ի 1973 թվականի ապրիլի 20-ի № 6883 արձանագրությամբ 01.01.1973թ. դրությամբ ըստ B, C<sub>1</sub> կարգերի համապատասխանաբար 917 հազ.մ<sup>3</sup>, 1963 հազ.մ<sup>3</sup> քանակներով: Հանքավայրի բազալտների որակը համապատասխանում է ԳՈՍՍ 9479-69 և ՀՍՍ 100-62 պահանջներին և կարող են օգտագործվել որպես շինարարական բլոկների, խճի և ավազի հումք: Բլոկների ելքը կազմում է 20%: Հանքավայրի բազալտների ֆիզիկամեխանիկական հատկությունները բավարարում են որպես հումք շինարարական քարի РТУ Армянской ССР 100-62 «Պատքարեր լեռնային ապարներից» արտադրության համար:

Հայցվող տարածքում նախկինում խախտված, վերականգնված հողեր, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ չկա: Ընկերության կողմից բացահանքի հայցվող տարածքը կազմում է 9,357 հա, ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Հայցվող պաշարների ծայրակետային կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով հետևյալն են.

- |                               |                               |
|-------------------------------|-------------------------------|
| 1. 4550453.2575, 8441835.2715 | 6. 4550882.4903, 8441771.7893 |
| 2. 4550650.4515, 8441855.5111 | 7. 4550955.3040, 8441725.5582 |
| 3. 4550662.6494, 8441741.2477 | 8. 4551010.0000, 8441826.0000 |
| 4. 4550646.9163, 8441701.5894 | 9. 4550657.6652, 8442020.8667 |
| 5. 4550797.0000, 8441628.0000 |                               |

Բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- Ամենամեծ երկարությունը – 435 մ,
- Ամենամեծ լայնությունը – 286 մ,
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 9.7 մ,
- Մակաբացման ապարների միջին հզորությունը – 1.52 մ,
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 694840 մ<sup>3</sup>,
- Արդյունահանվող պաշարների քանակը՝ - 646.4 հազ.մ<sup>3</sup>,
- Մակաբացման ապարների քանակը – 147.9 հազ.մ<sup>3</sup>,
- Բացահանքի օտարման մակերեսը – ~ 9.34 հա:

Շահագործման ընթացքում օգտակար հանածոյի անխուսափելի կորուստները, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում կազմում են 48540 մ<sup>3</sup> կամ 6.99%:

Հանքավայրի բացումը սկսվելու է նրա հյուսիսային մասի՝ 1498.2 մ բարձրության նիշից: Բացահանքը շահագործման հանձնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

1. Հանքավայրի բացումը կատարվում է նրա հյուսիսային մասի՝ 1498.2 մ,



բարձրության նիշից,

2. Նախատեսված է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի արևելքից անցնող ավտոճանապարհի կամրջի հատվածից մինչև բացահանքի 1498.2 մ բարձրության հորիզոն: Ավտոճանապարհի երկարությունն է՝ 123 մ: Հողային աշխատանքների ծավալն է՝ 150 մ<sup>3</sup>:
3. Բացված պաշարներով ապահովման համար 1498.2 մ բարձրության հանքաստիճաններում մակաբացման ապարների հեռացում՝ 1200 մ<sup>3</sup> ծավալով,
4. Բացահանքի շահագործման շինարարական շրջանում բացահանքում 1498.2 մ բարձրության հորիզոնում 650 մ<sup>3</sup> ծավալով պաշարների արդյունահանում (ուղեկցվող հանույթ):
5. Արդյունաբերական հրապարակի կառուցում -220 մ<sup>2</sup> (40մ<sup>3</sup>):

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական, խորացող, մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝

- Հանքաստիճանի բարձրությունը – 3.5 մ,
- Անվտանգության բերմայի լայնությունը – 1.2 մ,
- Աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 90°,
- Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20 մ:

Ավտոճանապարհների անցումը՝ մակաբացման ապարների հավաքումը և կուտակումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ: NEW HOLLAND B110B մակնիշի բազմաֆունկցիոնալ սարքավորմամբ կատարվելու է մակաբացման ապարների հավաքումը և տեղափոխումը (5-10 մ հեռավորությամբ) բացահանքի հանքաստիճաններում, ինչպես նաև լցակույտերի ձևավորումը: Մակաբացման ապարները նախագծված բացահանքի եզրագծով ներկայացված են 0.3 մ հզորությամբ (29200 մ<sup>3</sup>) հողաբուսական շերտով, էյուվիալ- դեյուվիալ նստվածքներով, որոնք ներկայացված են կոտրտված բազալտների, պորֆիրիտների, տուֆերի բեկորներ պարունակող ավազակավերով՝ 0.11 մ հզորությամբ՝ 10700 մ<sup>3</sup>, ինչպես նաև ջարդոտված հողմնահարված բազալտներով՝ 1.11 մ հզորությամբ 108000 մ<sup>3</sup> ծավալով: Միասին մակաբացման ապարները կկազմեն 147900 մ<sup>3</sup>, միջին հզորությունը 1.52 մ է: Մակաբացման ապարները շահագործման սկզբում ավտոինքնաթափով կտեղափոխվեն բացահանքի սահմաններում, նրա հարավային մասը ժամանակավոր լցակույտ, հետագայում՝ արդյունահանման ընթացքում բացահանքի բացված հատակի վրա ներքին լցակույտ ձևավորելու համար:

Բացահանքի հյուսիսային հատվածը արդյունահանելիս նախատեսվում է ներքին կիսախրամներով ելք դեպի բացահանքի հարավային հատվածը՝ N1 և N2 լցակույտ, որի ամենամեծ երկարությունն է 160.0 մ: Լցակույտի միջին բարձրությունն է 7.2 մ շեպի թեքության  $\alpha=35^\circ$ -ի դեպքում՝ զբաղեցրած մակերեսները վերին մասում և հատակում համապատասխանաբար կազմելու են՝ 10600 մ<sup>2</sup> և 15050մ<sup>2</sup>:

Հանքավայրը կշահագործվի հետևյալ հերթականությամբ՝ սկզբում կշահագործվի բացահանքի հյուսիսային մասը մինչև բացահանքի հատակը, որի ժամանակ մակաբացման ապարները կտեղափոխվեն բացահանքի հարավային հատվածը կստեղծվի N1 հողաբուսական շերտի և N2 էյուվիալ-դեյուվիալ նստվածքներով և N3 ջարդոտված հողմնահարված բազալտներով ժամանակավոր լցակույտեր:

Շահագործման 16-րդ տարվանից սկսած հյուսիսային մասը մինչև բացահանքի հատակը շահագործելուց հետո կիրականացվի բացահանքի հարավային մասի շահագործումը, որի ժամանակ հարավային հատվածը ծածկող և լցակույտերում եղած մակաբացման ապարները կտեղափոխվեն բացված հանքաստիճանների վրա, կցվեն



1.6մ բարձրությամբ և կհարթեցվեն: Սկզբում ներքին լցակույտեր կտեղափոխվի N2 լցակույտի ապարները, որի վրա կլցվի N1 հողաբուսական շերտը և կհարթեցվի: N3 լցակույտի ապարները հետագայում օգտագործվելու են խճի արտադրության համար:

Բուլդոզերային աշխատանքները բացահանքի շահագործման ժամանակ կայանում է մակաբացման ապարների և արտադրական թափոնների տեղափոխումը և կուտակումը բացահանքում ու լցակույտում: Դրանց տարեկան ծավալը կազմում է 7395 մ<sup>3</sup> և 25852 մ<sup>3</sup>:

Տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսված է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Հանքավայրի մշակման համար ընտրվել է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ՝ մակաբացման ապարները ժամանակավոր արտաքին լցակույտեր տեղափոխումով: Հորապայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:


Հանքավայրի տարածքում նախատեսվող գործունեության շրջանակներում ջարդիչ կայանքի տեղադրում չի նախատեսվում: Բազալտի բլոկները, շինաքարը իրացվելու են հանքի տարածքից անմիջապես սպառողին, տեղափոխումը կատարվելու է սպառողի ավտոտրանսպորտով: Հումքի մշակումը անհրաժեշտության դեպքում կատարվելու է հանքից 3 կմ հեռավորության վրա գտնվող «Հուշ» ՍՊԸ արտադրամասում՝ պայմանագրային հիմունքներով:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեղադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ջրցան-վացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով: Աշխատողների համար խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվել է 116.48 մ<sup>3</sup> /տարի, միջին օրեկան 0.398 մ<sup>3</sup>: Կենցաղային կեղտաջրերը՝ /0.38 մ<sup>3</sup> օրեկան ծավալով/ կլցվեն բետոնային լցարան, որտեղից պարբերաբար կտեղափոխվեն սահմանված կարգով: Բացահանքում ջրահեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում քանի որ հայցվող տարածքում գետնաջրերը բացակայում են: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով՝ ներծծվելով ճաքերի մեջ:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է օգտակար հանածոյի արդյունահանման և տրանսպորտային աշխատանքներով և արտահայտվում է փոշու և ծխազազերի առաջացմամբ: Իրականացվել է արտանետվող վնասակար նյութերի գումարային հաշվարկներ բացահանքի համար և համաձայն արդյունքների՝ աղտոտվածության առավելագույն մակարդակը ցածր է եղել թույլատրելի նորմերից:

Հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելվելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ ուղղված օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- ✓ փոշենստեցման նպատակով արդյունահանման տեղամասի (աշխատանքային հրապարակ, լցակույտեր, ավտոճանապարհներ) ջրում տարվա չոր և շոգ եղանակներին՝ օրեկան 2-3 անգամ,
- ✓ մեքենաների ներքին այրման շարժիչների վառոցների կարգավորում, արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- ✓ տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում և սնվազեցման ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակարդակի նվազեցման



նպատակով,

- ✓ նավթամթերքների, դրանց մնացորդների պահեստավորում և անվտանգ պահում, սպառում որպես քսանյութ և վառելանյութ,
- ✓ կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխում կազմակերպված աղբավայր,
- ✓ բանեցված կապարե կուտակիչների պահեստավորում արտադրական հրապարակի հատուկ հատկացված՝ ծածկի տակ, օդափոխվող տարածքում, այնուհետև հանձնում,
- ✓ խախտված տարածքների ռեկուլտիվացիա (լեռնատեխնիկական և կենսաբանական) և այլն:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսված է արդյունահանման հետևանքով խախտված տարածքների տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա/վերականգնում: Հարթեցումը կկատարվի բացահանքի հատակի ողջ մակերեսով՝ 92000 մ<sup>2</sup>, ինչպես նաև արտադրական հրապարակը 250 մ<sup>2</sup>: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 92250 մ<sup>2</sup>: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա: Կենսաբանական ռեկուլտիվացիայի ընթացքում ներքին լցակույտում պահեստավորված հողաբուսական շերտը փովելու է 92000 մ<sup>2</sup> մակերեսով հարթեցված տարածքում (բացահանքի հատակ), կատարվելու է համահարթեցում, պարարտացում Տաշիրի տարածաշրջանում շահագործվող Նովոսելցովո-Սարատովկայի հանքավայրի օրգանական նյութերով հարուստ բնական տորֆով և տարախոտային-տարախոտահացազգային բույսերի (երեքնուկներ, աովույտ, դաշտավլուկ, սիզախոտ, ոզնախոտ) սերմերի ցանք: ՇՄԱԳ-ում ներկայացվել է այդ աշխատանքների իրականացման ծախսերի խոշորացված հաշվարկը՝ 92250 մ<sup>2</sup> ընդհանուր տարածքի համար լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի համար գնահատվել է 1.582.91 հազ ՀՀ դրամ, ինչը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, ջրային ռեսուրսները, կենսաբանական միջավայրը և սոցիալական միջավայրը /աղմուկ, թրթռում/: Մշտադիտարկումների իրականացման համար ծախսերը կազմում է 750.0 հազ ՀՀ դրամ: Ընդերքօգտագործման աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կառավարման համար նախատեսվել է միջոցառումներ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:



**Փորձաքննական հիմնավորումներ.** Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Տաշիր համայնքում իրականացվել են հանրային 4 քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Ներկաների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում բնակավայրերից աշխատատեղերի ստեղծումը և Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, առողջապահության, ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Լոռու մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ներքին գործերի նախարարության կողմից տրվել է արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ 3458 եզրակացություն:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների, ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նորմերի, բնապահպանական պահանջների կատարումը:
2. Հանքարդյունահանման ընթացքում Տաշիր գետից ջրօգտագործումն իրականացնելու դեպքում շրջակա միջավայրի նախարարությունից ստանալ ջրօգտագործման թույլտվություն:
3. Ապահովել Տաշիր համայնքում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
4. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:
5. Հանքավայրի և բնակավայրի ուղղությամբ իրականացնել պաշտպանիչ շերտով ծառատունկ:
6. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև



արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

7. Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմել հանքի փակման վերջնական ծրագիր և ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
8. Շինարարական խիճ ստանալու համար ջարդիչ կայանքի տեղադրման դեպքում գործունեության նախագծման փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
9. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը/կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/ և դրանց իրականացման ժամանակացույցը:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Կամենկա սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Սարատովկայի բազալտների հանքավայրի հարավ-արևելյան տեղամասում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,  
առաջատար մասնագետ

  
Աստղիկ Վարդանյան

